

ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիյր. թեկնածու

ՆԱՐԵԿԱՅԻ-ՄԻԱՄԱՆԹ

Միամանթուն պայքարի, կամքի ու գաղափարի երգը ինքնադիպ պարկերավորությամբ, բարձրացնում է նոր աստիճանի: Նա շարունակում է Նարեկացու, Աբովյանի հրեղեն խոսքի ավանդները: Բանաստեղծը ազգային ավանդները միահյուսում է ժամանակի երոտպական պոեզիայի՝ գաղափարի ընդլայնման, խորհրդապաշտական հնարքներով խոսքի մոգական գորացման եղանակներին:

Անպարփակ է Միամանթոյի քարոզած ըմբոստության շրջանակը, նույնը ևս փարածությունը, որը ծնում է հերթափոխ հայրենիքի զգացողությունը: Նա հայրենիքի պարմությունը բացում է ներկայի մեջ՝ խառնված կամքով զոդված ապագայի փեսային:

Անպարփա հայրենիքի հանդեպ հավատը դեպի հերոսացում է փանում ամբոխներին: Միամանթուն մարգարեի անունից գեղարվեստորեն հիմնավորում է կամքի, ուժի, գաղափարի փիլիսոփայությունը: Նրա պոեզիայում թեև փեսաների ևն Բողոքի, Մեղմեղի, Վերվերի, Վերհարնի պոետիկական առանձին սկզբունքներ, սակայն առաջնայինը ուրվագծվող Գերմարդու մեջ ընդվզումի լեռնացումն է:

Միամանթուն նժարից դուրս է թողնում կորստի դարերը, բանադրում է գաղափարի հանդեպ դույզն-ինչ կասկածը: «Միայն Գաղափարն է, որ ոչ մահ ունի, ոչ դադար...» («Կախաղաններու կարարէն»):

Միամանթուն խոսքի շիկացումով հակադրվում է պանթոքսիստիկ հեղինակներին՝ ձգվելով դիմագրավել նրանց գաղափարախոսությանը: «Նոգեվարքի և յոյսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամէս» ժողովածուներում մարգարե-բանաստեղծի հայացքը սուզվում է արյան ու եղեռնական խավարի մեջ: «Փողոցներուն մեջ մորթումս սերունդներ կրեսնեն...» («Մահուան փեսիլք»):

«Դիցազնօրէն», «Նայորդիներ» ժողովածուները հեղափոխության (Դ. Վարուժան), «Նոգեվարքի և յոյսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամէս» ժողովածուները եղեռնի Նարեկն էին:

Արշակ Չոպանյանը «Դիցազնօրէն»-ի մասին գրել է, որ այն «ամենևն հզոր փեսիլքներն մին է, գոր հայ միտք մը հղացած ու պղնձի մեջ քանդակած ըլլա»¹: Դժվար չէ կռահել, որ «ամենևն հզոր փեսիլքներն մին» կոչելով՝ Ա. Չոպանյանը նախ և առաջ նկատի է ունեցել Նարեկացու Մարտիրը:

- Նոգերեն իրարու երեսն հանկարծորեն հառնող փեսիլքներու հետ... («Մեղմեղի օր»):

Տեսիլների հիմքում բանաստեղծի անսանձ երևակայությունն է, որը, իր հերթին, Դ. Վարուժանը համարում է «Միամանթոյի փառանդին ամենևն փրկական գիծ»-ը: «... Ան հզոր երևակայութեան մը կարարն է...»²:

¹ Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, 1977, էջ 660:

² Միամանթո, Բանաստեղծություններ, Վենետիկ, 1993, Նսայան միությունում Վարուժանի ելույթը, էջ 12:

Չոպանյանի և Վարուժանի՝ Սիամանթոյի սրեղծագործության շուրջ դիսպարկումները այնուհետև ևս համընկնում են: Չոպանյանը «հզոր փեսիլքներն մին»-ը «պղնձի մեջ քանդակած» է փեսնում: Դ. Վարուժանը նման մի բնութագիր է փայլա. «Եարճանեան կարծես հրաշեկ երկաթով մարմարիոնի վրա պարկերներ կը դրօշե...»³: «Պղնձի մեջ քանդակած»-ը, «երկաթով մարմարիոնի վրա պարկերներ կը դրօշե»-ն նիցշեական փոխառություններ են («Այսպես խոսեց Զրադաշպը»): («Երանություն՝ գրել դարերի կամքի վրա՝ հանց պղնձի,- պինդ, քան պղինձը, ազնիվ, քան պղինձը»⁴:

Դ. Վարուժանը Սիամանթոյի բանասրեղծության մեջ երևակայությունից անանջապ է փեսնում գաղափարը և զգացումը, արդյունքում «կը ծնանի վեսմը»: Նա Սիամանթոյի արվեստը համարում է «մրբկային», հարկանիշ, որն առաջին հերթին բնորոշ է Նարեկացու Մարեանին: Ա. Չոպանյանը «մրբկային»-ի դիմաց ունի «հրաշունչ» բնութագրումը:

Տեղին կլինի հիշել, որ Չոպանյանը գրում է, թե Մարեանը և Աբովյանի վեպը «կայրին իրենց նյութովը»: Նարեկացու, Աբովյանի անվան կողքին, փաստորեն, քնաբերգության «հրաշունչ» «փոփոռ զգացմունքների կրակի» հարկանիշով պես է դնել նաև Սիամանթոյի անունը: «Կենարարի հիշարակով միշտ ճենճերում» է Նարեկացին, իր «խորովիլը» կրկնում է Աբովյանը, ազգային փրկության ցավի բոցերում այրվում է Սիամանթոն («Եւ շունչիս մեջ մահամերձի հոնդին, նզովքի խօսքեր, պայքարի վճիռ»):

Վարուժանը Սիամանթոյին բնորոշում է որպես խորհրդապաշտ ու միսփիկ: Նարեկացու միսփիկիզմը անցել է Սիամանթոյին: Ակադեմիկոս Ն. Թամրազյանը Սիամանթոյի սրեղծագործության մեջ նկատում է «մոայլ երանգով շարժված միսփիկ քրամադրություններ»⁵: Սիամանթոն միախառնում է Մարեանի հուզախոռվ քրամադրությունները և խորհրդապաշտների մոայլ միսփիկան, քանի որ քառապանքի իր բաժնով միայն նա կարող է մոտենալ Նարեկացուն: Նման քառապանքը ծնվում է մեռնող ժողովրդի փրկական ցավից:

Նարեկացու Մարեանին Սիամանթոյի սրեղծագործության մերձեցման մյուս ուղին ծանր փեսիլքներն են: Սիամանթոյական նման փեսիլքների հիմքում նաև սիմվոլիզմն է: «Անապարներում ռոնացող շները, հոգեվարքի ճիշով վայր ընկնող փրեները, մենավոր ու արյունոտ լուսնկան, իրարու համար աղոթքի ելնող մեռելները,- բոլորը միասին սրեղծում են ծանր, միսփիկ մթնոլորտ...», - գրում է Ն. Թամրազյանը⁶: Ըստ Աբեղյանի՝ Նարեկացու երևակայությունը հակված է դեպի «կյանքի մոայլ փեսարանները»⁷: «Եւ նա փեսնում է դժոխքը, կորստյան խորխորարը, ուր «հրեղէն են գերքն... մշտնջենատր է փագնապն. ամենագրաւ փարփարոսն»⁸:

Մարտափի ու դժոխքի փեսարանները հաճախադեպ են «Նոգեվարքի և յոյսի ջաւեր» ժողովածուում: Ահա զարհուրանք ծնող կապակցություններ «Մեռելոցի օր» բա-

3 Անդ:

4 **Ֆ. Նիցշե**, Այսպես խոսեց Զրադաշպը, Երևան, 2008, էջ 342:

5 **Նրանուր Թամրազյան**, Սիամանթո, Երևան, 2003, էջ 110:

6 Անդ:

7 **Մ. Աբեղյան**, Երկեր, Գ. հատոր, Երևան, 1968, էջ 603:

8 Անդ:

նասարկեղծությունից. «Ի՛նչ խրպում ուրքի կեցող ոսկորներու», «շրթնաթափ բերաններու դէմ», «կմախքէ բերաններն»:

Նարեկացու երկի դժոխսարեւիլ պատկերների հետ մեկտեղ Սիամանթոյի «մոայլ, միսպիկ» քրամադրությունը սնում է խորհրդապաշարներ Վերհարնի «սարսափի ու ցնորքի», Մերերլինկի «վերահաս աղերի կանխագուշակման», Բողերի «մեռելային չարագուշակ ուրվականների», Վերլենի «խեղաշարված կյանքի թախիծների»⁹ պոեզիան:

- Ու օդին մեջ արիւնի ու մոխիրի նախճիր մը կհեւայ... («Գիշեր մը»)

«Ֆլամանդական բանասարկեղծություններ» գրքում «երկինքը Վերհարնին թվում է երկաթյա և սառցե, ծովի ալիքները սեպի պես մխրճվում են հրվանդանների և կղզիների բաց վերքերի մեջ, լեռները բարձրանում են ինչպես արյունածարավ կուտքեր, ծառերը «կտրանքների փակ» արմատախիլ են լինում»¹⁰: Վերհարնի համար երկինքը սեւ փայտից է, երեկոները գլխաւորված են, երկնքի արյունը վար է հոսում՝ դեպի ճահիճները: Սիամանթոն հարազատ է Վերհարնի պատկերամրաժողոթյանը և առավելապես սրելծագործական վաղ շրջանում դիմել է նմանարիպ պատկերներին:

- Ու չեմ գիտեր ուր փարին

Իմ մարմինս անիրաւօրէն լքուած

Տողին փառքերէն վիրաւոր

Ու իր արիւնոյր ճամբաներէն փժգունած:

(«Մահերգ»)

Սիամանթոն, ինչպես Վերհարնը, պատկեր-սիմվոլների միջոցով ողբերգությունը դարձնում է քրեականի (կմախքներու աշտարակ, դարերու պատրանքներուն, մահվան կացարանը և այլն):

Սիամանթոյի սրելծագործությունը թեմայիկ կտրուկ բաժանումներ չունի, դրանով, այս անգամ ևս, այն մերձենում է Մարտանին, որին բնորոշ է ասելիքի «միագծությունը», խորացումը գաղափարի և նրա արտահայտման որոշակի կայուն ձևերի մեջ: Խորացումը գաղափարի մեջ բնորոշ է նաև Սիամանթոյի քնարին, որը թողնում է աստիճանակարգվածության փայտվորություն: Նեղափոխություն - նահապետություն - հայրենի հրավեր գծում փակվում է բանասարկեղծի քրեապաշարը:

Պարահական չէ, որ Վարուժանը այսպիսի համոզում ունի. «Սիամանթո գրեց Յեղափոխության Նարեկը...»: Վարուժանի բնութագրության նմանությամբ կարելի է ասել, որ հանձին «Տոգելարքի և յոյսի ջահեր» ու «Կարմիր լուրեր բարեկամէս» ժողովածուների, Սիամանթոն գրեց Եղեռնի Նարեկը: Վարուժանը պետք է որ նկարի ունեցած լինի գաղափարի, հույզի մրրիկը Սիամանթոյի առաջին երկու ժողովածուներում: Մարտանում ծառս է լինում հավաքի մրրիկը:

Սիամանթոն իր ողջ սրելծագործությամբ «հեղափոխեց Յաղթանակին լուսաւոր իրանը» (Դ. Վարուժան), Նարեկացին՝ Լաւրծո կողմից մարդու փրկությունը:

Լեզվական գյուտերի հորդությունը, որ Մ. Աբելյանը բնորոշ է համարում Մարտանին, աչքի է զարնում նաև Սիամանթոյի սրելծագործության մեջ: «Պատկերների թվի

9 Սիամանթո, Վարուժան, Երկեր, Երևան, 1979, Առաջաբան, էջ 11:

10 Է. Վերհարն, Նարեկեր, Մոսկվա (ռուսերեն), 1958, Նախաբան, էջ 8:

մեջ չափ չգիտի»,- Նարեկացու մասին գրում է Աբեղյանը: Չափ չգիտի նաև Սիամանթոն:

Դ. Վարուժանը «Սուրբ Մեսրոպ» պոեմի առիթով Սիամանթոնյին անվանում է «վերադիրներուն գրիչ մը», «ինչպես իր Վարպետը՝ Նարեկացին»: Նա ավելացնում է, որ Սիամանթոն նոր պոեմով «գինքը Նարեկացիին հետ կապող թելը» «ամրակուռ շղթայի մը վերածեց»: Վարուժանը ճշմարտացի է: Նարեկացու հետ Սիամանթոնյի սրելոծագործական կապը նկատելի էր դեռևս առաջին շարքերում: Նկարի ունենք հարկապես նարեկացիարիպ վերադիրները («Դիցազնօրէն», ավերակներու բառուղի, պաշտամունքի ջահեր, նայվածքներուդ արիւնին աղբիւրներովն, ընդվզումի սպինքներ, կամքին ձեռվըներէն, մեռելներուն ժայթքումն, ըմբոստացումներու ամբոխը, իդէալին գազաթնդէն եւ այլն): Նարեկացու հետ կապող թելի «շղթայի մը վերածուկ» ասելով՝ Վարուժանը պետք է նկարի ունեցած լինի «Սուրբ Մեսրոպ» քերթվածի նարեկացիարիպ վերադիրների խիստ շարքը, աղոթասացությունը, փեսիլքը, ներբողյանը: «Սուրբ Մեսրոպ»-ի պարկերակառուցվածքային նմանությունը Մաքյանին ակներև է:

Նոմանիշներին, բառային հակադրություններին, դիմելաձևի բազմապիստությանը թվում է, թե վերջ չկա, ինչպես Մաքեանում է: Նմանականում ներբողյանն է, որ «Սուրբ Մեսրոպ» պոեմը մերձեցնում է Մաքեանին:

«Նայ նոր գրականության պարմության» հինգերորդ հարորում նշված է, թե «ներբողական կառուցվածքն ինքնին բացառում է պարմափիլիսոփայական խորացումների հնարավորությունը», սակայն հարկ է նկատի ունենալ, որ ներբողյանը հոգևոր նախածրվածք ունի, ինչը Սիամանթոնյին մղել է իր հերոսի աստվածացման միակ ժանրաձևին: Բացի այդ, փիլիսոփայական գաղափարի ու նվիրումի պաշտամունքը, որ առկա էր «Դիցազնօրէն»-ում եւ «Նայորդիներ»-ում, «Սուրբ Մեսրոպ» պոեմի համար նույնպես ամենաբնորոշն է: Այդ «կարծրախարխախ» գաղափարն ավելի զորեղ կովան է ձեռք բերում ներբողյանի կայուն ավանդույթներ ունեցող ժանրում: Սիամանթոն Նարեկացու ներբողյանի օրինակով հիմնավորում է իր վերջնահանգրվան ասելիքը (Մաշտոցի սրբացումը): Մաշտոցի գյուրը գուցեղավում է բացարձակ գաղափարի հաղթանակին: Ներբող-աղոթք-փեսիլք - գյուր՝ «Սուրբ Մեսրոպ» պոեմի կառուցվածքի բաղադրիչներն են:

Այբուբենի գյուրը կողավորվում է ազգային եւ վերագգային չափումներով.

- Եւ Պղարօսի հետ գրեզ եւ մարքի Աստուած կը կոչեն...

(Կարբերակային փոփոխություն)

«Ալիաբեդան» «ոսկեդարու աղամանդեայ բանալի» է: Այն հայ հանճարի հավաքականությունն է.

-Ահաասիկ Նայ Նանճարը բազմաչար

-Քու ձեներուդ մէջ կը ձուլուի...

(Սիամանթոն)

Սիամանթոն Սրբին ներբողելու համար օգտագործում է նարեկացիական վերադիրներ, ապա դրանց նմանությամբ իր կազմածները:

-Ով անպարագիր պարկեր...

-Անպարագիր եւ անվայրափակ... («Ներբող ի սուրբ առաքեալն»:

Երկու վերադիրները օգտագործված են Մովսես Խորենացու՝ Վարդավառի խորհրդի մեկնության մեջ):

- Դուրս վեհիմաստ փանական եւ Աստծո՛ր բաժակ...
- Եղեռնի բաժակները... (Սիամանթո)
- Բաժակ բերկրութեան... (Մաքեան)
- Բաժակ լուսցման մեղաց... («Ներքող ի սուրբ խաչն»)
- Եւ կռանիարեայ ուղղափառ սխն... (Սիամանթո)
- Երկաթեղէն սխն անկարծելի... («Քարոզ եկեղեցոյ»)
- Դուրս Յիսուսի բազմաբարեւան պարմունան (Սիամանթո)
- Եւ մաքուր ընտրութեանց սուրբ պարմունան... («Ներքող ի սուրբ խաչն»)
- Աստված անհեղի (Սիամանթո)
- Անհեղի կնիք... (Մաքեան)

Առանձին նշերը նարեկացիական վերադիրներ, որոնց նմանությամբ Սիամանթոն ստեղծել է առանձնահատուկ վերադիրներ: Ահա Նարեկացունը՝ անսահմանելի փեսիկ, արգանդ սրբի, սրբին աչացս, անհավագիր պարկեր, գյուտյն առասան, զպարտուհան փեսութեանց, մայր լուսոյ, դուստր հաւապոյ եւ այլն:

Սիամանթոյական վերադիրներ են՝ ստեղծված նարեկացիական եւ խորհրդապաշտական փխպարանությամբ. դպրութեան անշրջանակ լուսամուտ, ռահվիրաները մարմարեղէն յոյսին, նայթուածքներու արիւնը, հոգեվարքի եւ յոյսի ջահեր, կամքին ձեռքներէն, ըմբոսպացումի գաւակներ, յոյսին սրինքներ, ընդվզումի սրինքներ եւ այլն: Ավելորդ չի լինի վերադիրներ հիշատակել Շ. Բողերի «Չարի ծաղիկներ» գրքից: Այսպես, օրինակ, գեւր մոռացումի, ծաղկանոց ծուրության, գաղափարի աշունքին, դիակառքեր փրկեցերիս, ճշմարտության ջրհոր, փարոս հեզմանքի, գիշերներիս հապակին, երեկոյի ալ կարմիր վերարկու: Սիամանթոն «Տժգունօրէն» բանաստեղծության մեջ այսպիսի փողունի. «Իր սուգի վերարկուն երկարօրէն...»: «Նոգեվարքի եւ յոյսի ջահեր»-ում Մարտիրոսիկի Սիամանթոյի փոխառած երեք փողերից մեկն է՝ «Տօնի երկայն վերարկուներով... այցի գնացին գիւղի անձկոտ աղքատներուն»:

Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» ներքողյանի ակունքը Նարեկացու ներքողներն են եւ Աստծուն Մաքեանի դիմելածները.

- Տէ՛ր իմ, Կէ՛ր, փութիչ պարգեւաց, ինքնաբուն բարի,
- Ամենից փրկող հաւասարապէս, միայն արարիչ զբնաւ յոյսից,
- Փառաւորեալ, անքնին, անհեղ, անարկու,
- Մոսկալի, հզար, սաստիկ,
- Անտանելի, անմեղմանալի, անըմբռնելի, անիմանալի,
- Անճառելի, անտեսանելի, անզննելի, անշաշափելի,
- Անորոնելի, անսկիզբն, անժամանակ... (Բան Գ., ա.)
- Ահա մի հարկած Սիամանթոյի ներքողյանից.
- Ոսկեհոս գեւր գիպութեան,
- Մարքի Փրկիչ, յոյսի Նսկայ, կեանքի Կեղոն,
- Դուրս անվախճան փռշիացեալ,

Դուն ջահերու անմարելի շրեմարան...

«Մուրբ Մեսրոպ» պոեմում նմանօրինակվել են Մարտանի՝ աղոթողի փանջագին վիճակի ներկայացման և անձի նվաստացման եղանակները:

-Ես ապիկար՝ մարմնեալ անարժան գործովքս յիրաւի,

Վարնիչ արքունի գանձուց՝ կրկնադար և անթափելի...

Բիւր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի:

Անբարեխաւս կապեալ՝ ի պահեստ դառն արգելանի,

Նեծումն և վաստակ ցաւոց՝ ճաշակեալ յաննշոյլ բանքի,

Անապաւէն փանջեալ՝ անթոշակ կամ ողորմելի... (Բան ԻԶ., ք.)

Ինքնադատման հարված «Մուրբ Մեսրոպ» պոեմից.

- Ես աչք աղօյր և քննողութիւն անթափանց

Ունայնամիւր ունկնդիր և չարաւոր ականջ,

Աննեղաշնակ երաժիշտ և մեղկաձայն երգիչ:

Ես աննողագործ դաշտօրայ, շրեմարան թափուր,

Մեղանասպաս անհաց և ցամաքեալ գինեքաշի...

Սիւսմանթոն Մաշտոցին անվանում է «Տարօնածին հսկայ Մովսէս»: Կորյունն է «Վարք Մաշտոցի»-ում Մաշտոցին «հալասաբեցնում մեծ Մովսէսին»:

«Մուրբ Մեսրոպ» պոեմի «Տեսիլք»-ում զգացվում է կրկին առնչություն Կորյունի «Վարք»-ին:

- Ահաւասիկ Քերովբէ մը մրափին մէջ Մեսրոպին,

Իր աջ ձեռքովն լուսագիծ՝

Ակնթարթ մը՝ մենաստանին որմին վրայ

Նայկազնեան Այբբենարանը փառագրեց...

Կորյունը հիշեցնում է աստվածային պարգամը Մովսէսին. «Գրիր այս փեսիլը փախարակի վրա և հաստատիր գրքի մեջ»: Տեսիլը գրվում է թե՛ «փախարակի վրա» և թե՛ «որմին վրա»: «Նրաշքին փակ արքասուելով» Մաշտոցը

Փերուր գրիչն և փախարակն ի ձեռին...

Որմին առջև անհունօրէն ծնրադրեց...

«Նրաշքին փակ արքասուելով»-ը, թերեւս, կապ ունի նարեկացիական ջերմեռանդ, արքասվայից աղոթքի հետ:

Գրիգոր Նարեկացու սքեղծագործության հետ կապը Սիւսմանթոյի քերթվածների համար սնուցող, զորացնող դեր ունի: Եւ եթե Նակոբ Օշականը «Մուրբ Մեսրոպ» պոեմը համարում է «իւ պարզագոյն փարբերուն վերածուած, առանց գործողութեան, առանց վիճակի կամ վիճակներու», մոռանում է, որ Սիւսմանթոյի ընտրած ժանրը ներքողն է, ինչպիսին Նարեկացու ներքողներն են, և նրանից պէտք չէ գործողություն ակնկալել: